ԱՐԺԵՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՌԵԹԵՈՍ ՊԵՐՊԵՐՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՆԵՐՍԵՍ ԹՈՎՄԱՍՅԱՆ

XIX դ. վերջերին արևմտահայ իրականության մեջ քաղաքատնտեսության հարցերի քննության ընդարձակ ծրագրով այլոց թվում (Նիկողայոս Զորայան, Կարապետ Յութուջյան և ուրիշներ) հանդես է եկել նաև հայտնի տնտեսագետ Ռեթեոս Պերպերյանը[1]։

Ն. Զորայանի հետևությամբ Ռ. Պերպերյանը նույնպես քաղաքատնտեսության բովանդակությունը համարում է հարստության արտադրության, բաշխման և սպառման օրենքների ուսումնասիրությունը։ Փոխանակության փուլը երկուսն էլ վերարտադրության պրոցեսից դուրս են թողել այն պատճառով, որ առևտուրը նրանք համարում են արտադրության ճյուղ։ Հարստության ըմբռնումը, սակայն, Պերպերյանի մոտ այնքան ընդհանուր է, որ ընդգրկում է մարդկանց նյութական ու հոգևոր բոլոր կարգի պահանջմունքները բավարարելու անհրաժեշտ բարիքները։ «Կսխալին նոքա, որք հարստությունն միայն նյութական իրաց մեջ կկացուցանեն,— գրում է նա և ավելացնում,—... հարըստություն է ամեն ինչ, որ կարե գոհացնել մի պետք՝ կանվանի օգտակարություն... Ամեն օգտակարություն, որ սեփականելի է, հարստություն է»[2]։

Հարստության հետ սերտորեն առնչվում է արժեք հասկացությունը, որի բովանդակությունը նա ճշգրտում է նախքան արտադրության խնդիրների լուսաբանումը։ Արժեքի կարևորությունը շատ է մեծ, այն «տնտեսական շենքի անկյունաքարն է»[3]։ Քաղաքատնտեսության մեջ արժեքի շատ սահմանումներ կան, նշում է նա և հանգում այն ուշագրավ հետևության, թե՝ «երբ լավ ուշ դրվի, կտեսնվի, որ արժեքը երկու անհատից մեջ հարաբերություն մը է», որի բովանդակությունն է «բնութենեն մատակարարված օգտակարությունն, պատճառած ճիգն (ծախսված աշխատանքը—Ն. Թ.) և խնդրողին պետքն»[4]։ Այս բնութագրության մեջ արժեքի առաջին երկու գործոններն արտահայտում են սպառարժեք և արժեք կատեգորիաները, իսկ երրորդը՝ առաջարկի ու պահանջարկի հարաբերակցությունն է, որը գնի մակարդակը որոշող գործոն է, բայց ոչ արժեքի։

Քաղաքատնտեսության նախագիտելիքների նրա բնութագրումներում տեղ գտած թերությունները, սակայն, արտադրության բուն պրոցեսի վերլուծություններում անհետանում են, և տնտեսական կատեգորիաները հանդես են գալիս իրենց նյութական բովանդակությամբ։ Ռ. Պերպերյանը արտադրությունը դիտում է որպես բնության բարիքները վերափոխելու համար ծախսված մարդկային աշխատանքի պրոցես. «մարդո ճգանց և բնության գործողության այլ և այլ գործիներու գործողության հետ միավորությունն կկազմե արտադրությունն կամ ճարտարությունն»[5]։ Ըստ հեղինակի, արտադրության պրոցեսում է, որ բնության իրերը օգտակարություն և արժեք են ձեռք բերում, իսկ «ամեն ճարտարության հիմն է աշխատությունն»[6]։ Արտադրության տարրերի

---

[1] Ռ. Պերպերյան, Համառոտ քաղաքական տնտեսություն, Կ. Պոլիս, 1883, Նույնի՝ Դրամ, Կ. Պոլիս, 1886։

[2] Ռ. Պերպերյան, Համառոտ քաղաքական տնտեսություն, էջ 2։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում, էջ 3։

[5] Նույն տեղում, էջ 5։

[6] Նույն տեղում, էջ 6։

բնութագրության ընթացքում Պերպերյանը դարձյալ ընդգծում է արտադրության անձնական տարրի՝ աշխատուժի հույժ կարևորությունը. «դրամագլուխն, բաղդատությամբ աշխատության (հեղինակը աշխատության տակ նկատի ունի աշխատուժը—Ն. Թ.), երկրորդական է, զի ինքն իսկ արդյունք է աշխատության, մի արտադրություն է մարդկային՝ դարձած ի գործի արտադրության։ Աշխատությունն է, որ կարգասավորե բնական գործիչներն, նախնական նյութերն և օգտակարություն, ի հարստություն կփոխակերպե, և որ կշահավորե և կարտադրե իսկ դրամագլուխ»[7]։

Արտադրության կազմակերպման խնդիրների քննարկման ընթացքում Ռ. Պերպերյանին հատկապես հետաքրքրում է աշխատանքի և կապիտալի արդյունավետ օգտագործումը, որի հիմնական նպաստավոր պայմանը նա համարում է տնտեսական գործունեության ազատությունը։ Այստեղ նա նկատի ունի արտադրության միջոցների մասնավոր սեփականության վրա հիմնված կապիտալիստական արտադրությունը, որը զարգանում է անձի ու գույքի ապահովության և ազատ տնտեսական ձեռներեցության ծավալման պայմաններում։ Նա մերժում է ամեն կարգի պետական միջամտություն, ժխտում նախկին համքարական կազմակերպությունների գործունեությունը, որոնք արգելակում էին ազատ մրցակցությունը։ Արտադրողական ուժերի զարգացումը, քաղաքակրթության առաջընթացը և ազատ տնտեսական գործունեության ծավալումը հեղինակը բնութագրում է որպես երկմիասնական պրոցես. «Աշխատության ազատության զուգընթաց քայլած է արհեստից զարգացումն և ընդհանրապես քաղաքակրթության առաջացումն»[8]։ Որպես այս դրույթի փայլուն ապացույց, նա վկայակոչում է Անգլիայի օրինակը, որը մեծ չափերով հարստանում է հենց ազատ առևտրի շնորհիվ։ Բոլոր կարգի մենաշնորհներն ու արտոնությունները խախտում են տնտեսության զարգացման բնականոն ընթացքը և դառնում աղքատության պատճառ, «զի կշնչեն մրցումն, և մրցումն ջնջելով կարգելուն, որ իրաց գներն յուրյանց բնական մակերեսն գտնեն։ Տնտեսական մրցումն է, որ առաջ բերած է մարդկության բոլոր նյութական առաջադիմությունքն»[9]։

Ռ. Պերպերյանը հանգամանորեն լուսաբանում է արտադրության օգտագործման երկու գործոնների՝ աշխատանքի բաժանման և մեքենական արտադրության զարգացման կարևորությունը, որ նա դիտում է փոխադարձ սերտ կապի մեջ։ Սկզբում քննարկում է աշխատանքի բաժանման խնդիրները գործանոցի ներսում, երբ ապրանքի արտադրության ընթացքում «գործողությունք բաժնվին այլ և այլ գործողներու մեջ»[10]։ Վկայակոչելով Ադամ Սմիթին, հեղինակը ընդգծում է, որ աշխատանքի բաժանումը բանվորին դարձնում է իր գործին հմուտ մասնագետ, մեծ չափերով վերացնում անարտադրողաբար ծախսված աշխատաժամանակը՝ այսինքն բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը։ Մյուս կողմից, աշխատանքի բաժանումը պարզեցնելով աշխատանքի պրոցեսը «մեքենայից գյուտն կդյուրացնէ»[11]։ Եվ ամենևին պատահական չէ, որ մեքենաների առաջին գյուտարարները եղել են բանվորները, որոնց անունները հիշատակված են գրքում։ Պերպերյանին հայտնի է, որ աշխատանքի բաժանումն էժանացնում է աշխատուժը. «մի մարդ այլևս $^1/_{10}$ գնդասեղ միայն կաժե»[12], որ բանվորը դառնում է մասնագործ, որից ձեռնարկատերը դյուրությամբ կարող է ազատվել, և որ ջլատվում են բանվորի հոգևոր կարողությունները։ Այս ամենը գիտենալով հանդերձ, նա փորձում է մերժել դրանց նշանակությունը մի քանի պարզունակ դատողություններով,

7 Նույն տեղում։
8 Նույն տեղում, էջ 9։
9 Նույն տեղում, էջ 27։
10 Նույն տեղում, էջ 10։
11 Նույն տեղում, էջ 11։
12 Նույն տեղում, էջ 13։

որոնք գիտական արժեք չունեն։ Աշխատանքի տեխնիկական բաժանման հետ միաժամանակ հեղինակը լուսաբանում է աշխատանքի հասարակական բաժանման բովանդակությունը և ճիշտ բնութագրում նրա դերն ու կարևորությունը հասարակական արտադրության զարգացման գործում։

Ռ. Պերպերյանը մեքենաները համարում է «հանդարտ, անխոնջ և սակավապետ գործավորներ», որոնք մի քանի տասնյակ անգամ բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը և փոխարինում 200—300 բանվորի[13]։ Մեքենաներն ընդլայնում են արտադրությունը, բազմապատկում արտադրության ճյուղերը, էժանացնում արտադրանքը։ Մեքենական արտադրության առավելությունները գովաբանելիս նա այնքան է ոգևորվում, որ փորձում է ընթերցողին համոզել, թե մեքենական արտադրության զարգացման հետևանքով «բարեկեցությունն կընդհանրանա», «ազատության և հավասարության իրացման կնպաստեն ճոյժ մեքենայք»[14]։ Պերպերյանը դայրույթով է արտահայտվում այն հեղինակների հասցեին, որոնք խոսում են մեքենաների կիրառման բացասական հետևանքների մասին, նշում գործազրկության աճը, աշխատավարձի իջեցումը, աշխատավորության թշվառությունների ավելացումը։ Մի շարք թվերի միջոցով նա փորձում է հիմնավորել ոչ միայն փոխհատուցման տխրահռչակ տեսությունը, այլև ցույց տալ, որ մեքենական արտադրությունը, էժանացնելով կենսամիջոցների արժեքը, մեծապես նպաստում է բնակչության թվի ավելացմանն ու կենսամակարդակի բարձրացմանը։ Այստեղ, անշուշտ, խոսում է բուրժուազիայի գաղափարախոս Պերպերյանը, որին առանց խնայելու մերկացնում է հենց ինքը, երբ հանդես է գալիս որպես վերլուծող գիտնական։ Տնտեսական ճգնաժամերի իր ճշմարտացի բնութագրումների ժամանակ «Համառոտ քաղաքական տնտեսություն» աշխատության մեջ հեղինակը գրում է, որ «բազմաթիվ գործավորք կմնան անգործ, աշխատության խնդրանքն կպակսի, թոշակներն կիյնան... Գործի և վաստակի պակասությունն առաջ կբերե սպառման նվազություն, անկումն վաճառականության, աղքատություն, չվառություն»[15]։ Ճգնաժամի աղետալի հետևանքների նկարագրության ընթացքում Պերպերյանն ընդունում է, որ ընդհանուր դժբախտությունների շրջթայում «ամենե գեշն գործավորաց վիճակն է»[16]։ Այս ակնհայտ հակասության պատճառն այն է, որ հեղինակը, իբրև նախորդող ու հաջորդող բոլոր տնտեսագետների հետ միասին, չհասկացավ, որ վերոհիշյալ բոլոր աղետների բուն պատճառը հենց այդ նույն մեքենաների կապիտալիստական կիրառումն է։

Փողի մասին Պերպերյանի գիտելիքները նույնպես հիմնված են արժեքի աշխատանքային տեսության սկզբունքների վրա։ Փողի առաջացման պատմության համառոտակի լուսաբանման ընթացքում հեղինակը գրում է, որ փոխանակության զարգացման բարձր աստիճաններում «ընդհանուր կերպով ընդունված» միջնորդ ապրանք կամ դրամ են դառնում ոսկին ու արծաթը՝ իրենց մի շարք առավելությունների շնորհիվ։ Նախ, դրանք «ներքին հատուկ արժեք մը» ունեն, «փոքր ծավալի մեջ մեծ արժեք են պարունակում», «անապական» են և արժեքով «ոչ դյուրափոփոխ», «բաժանելի» են, որի մասնիկներն առանձին «յուրյանց համեմատական արժեքը» պահպանում են և «պաշտոնական դրոշմ» ընդունելու հատկություն ունեն[17]։ Փողի արժեքը որոշելու համար Պերպերյանն օգտագործում է ապրանքների արժեքի ընդհանուր սահմանումը. «Նորա արժեքն ալ, ինչպես այլ վաճառաց, կախում ունի մատուցման և խընդրանաց և արտադրության ծախուց պայմաններեն»[18]։ Հեղինակը մերժում է փողի անվանական տեսությունը այն հիմնավոր պատճառաբանությամբ, որ դրամը արտադրության պրոցեսի արդյունք է, ինքնին արժեք ունեցող ապ-

13 Նույն տեղում, էջ 15։
14 Նույն տեղում, էջ 15—16։
15 Նույն տեղում, էջ 47։
16 Նույն տեղում, էջ 50։
17 Ռ. Պերպերյան, Դրամ, էջ 23։
18 Նույն տեղում։

բանք է, հետևաբար «դրամոց արժեքն չկարե ինքնահաճ կերպիվ որոշվիլ իշխանության կողմանե»[19]։ Դրամը իր ներքին արժեքն ունի, որ կարող է փոփոխվել «ինչպես այլ վաճառաց», այսինքն՝ ինչպես բոլոր ապրանքների արժեքն առհասարակ, բայց ոչ պետության կամայականությամբ։

Փողի ֆունկցիաների պարզաբանման կապակցությամբ Պերպերյանը գրում է, որ ոսկին ու արծաթը ընդունվում են որպես «ընդհանուր չափ արժեցից», որով և «արժեքներն ալ կարեմք իրերաց հետ բաղդատել»[20]։ Փողը իր արժեչափի ֆունկցիան կատարում է գնի միջոցով, որը «է իրի մ'արժեքին բացատրությունն ոսկվո կամ արծաթո արժեքով»[21]։ Հեղինակին հայտնի է, որ ապրանքների, ինչպես նաև փողի արժեքները փոփոխվում են՝ կապված տեղի, ժամանակի, այլևայլ հանգամանքների հետ, երբ, ինչպես նա է ասում, փոխվում են ապրանքների արտադրության վրա ծախսված աշխատաժամանակը, դրանց օգտակարության աստիճանը, հազվագյուտությունը և այլն։ Այս առիթով հեղինակը քննադատում է Ադամ Սմիթին, որը «սխալված է զաշխատությունն դնելով միակ չափ և հիմն արժեից. ստուգիվ աշխատությունն որպես տեսանք արժեքին տարրերեն մինն է, բայց չենթադրեր պետքն, օգտակարությունն, հազվագյուտությունն, որք նույնին այլ տարրերքն են»[22]։

Ռ. Պերպերյանը տարբերում է երկու տեսակ գին՝ ընթացիկ կամ հրապարակի, որը «կորոշվի հրապարակին պարագաներեն և արտադրողին ու սպառողին փոխադարձ կացութենեն, ծախողին և գնողին ազատ հաճությամբ», և սկզբնական կամ բնական գին՝ «այն, որ ածած է իրն արտադրողին»[23]։ Պարզ է, որ առաջին դեպքում նա նկատի ունի շուկայական գինը, որը, նրա բնութագրության համաձայն, ձևավորվում է պատահական հանգամանքներով, իսկ երկրորդ դեպքում՝ արժեքը։ Բանավիճելով Ռիկարդոյի հետ, ըստ որի, գինը որոշվում է արտադրության ծախքերով, Պերպերյանը դրանց ավելացնում է «մատուցումն ու խնդրանքը», այսինքն առաջարկն ու պահանջարկը։ «Արտադրության ծախքերն իբրև կենդրոն մ' են ծանրության, ուր կհակի միշտ իրաց գինն, բայց մրցման ազդեցությունն այս կամ այն կոյս այդ կեդրոնին կտրուբերե զայն»[24]։ Պերպերյանը որոշակիորեն գինը տարբերում է արժեքից։ Գինը ապրանքի անվանական արժեքն է, որը կարող է փոփոխվել մի շարք հանգամանքների շնորհիվ՝ արժեքի անփոփոխության պայմաններում։ Իսկ ապրանքների իսկական էժանությունն ու թանկությունն ի հայտ են գալիս դրանց ներքին արժեքի փոփոխության դեպքում։ Հասարակության «առաջադիմությունն կբանաձևի գնո նվազությամբ», այսինքն՝ արտադրողական ուժերի զարգացման շնորհիվ ապրանքների «ներքին արժեքն» իջնում է, և գները նվազում են։ Թեպետև «արժեք և գին բառերն իրարմե տարբեր բառեր են», բայց դրանց մեջ գոյություն ունի ներքին կապ։ Գների իրական փոփոխությունը կապված է միայն արժեքի հետ, իսկ դրանց անվանական փոփոխությունները առաջ են գալիս արտաքին հանգամանքների հետևանքով, ուստի և հարստության փոփոխման արտահայտություն լինել չեն կարող։ Արժեքով «կչափվի հարստությունը»[25], բայց ոչ ապրանքների գնային արտահայտություններով, ամփոփում է հեղինակը իր դատողությունները արժեքի ու գնի փոխհարաբերության մասին։

Փողի՝ որպես շրջանառության և կուտակման միջոցի, ֆունկցիաները Պերպերյանի մոտ նույնպես լուսաբանված են արժեքի աշխատանքային տեսության սկզբունքներից ելնելով։ Միլիոնավոր փոխանակողների միջև բազմա-

19 Ռ. Պերպերյան, Համառոտ քաղաքական տնտեսություն, էջ 34։
20 Նույն տեղում, էջ 28։
21 Նույն տեղում։
22 Նույն տեղում, էջ 29։
23 Նույն տեղում։
24 Նույն տեղում, էջ 30։
25 Նույն տեղում, էջ 31։

բնույթ գործառնությունները տեղի են ունենում համարժեքային փոխանակության հիման վրա, և նրանց մեջ այդ «խորհրդավոր» կապերը հյուսվում են «շահուց և պիտոյից»[26] բավարարման պայմաններում։ Փողի կուտակման ֆունկցիան հեղինակը համարում է որպես արտադրության զարգացման, հասարակության առաջընթացի ապահովման նյութական պատվանդանի ստեղծման հզոր լծակ։ Փողի կուտակման ֆունկցիայի մասին Պերպերյանի մոտ հստակ պատկերացում չկա։ Ակնհայտ է, որ նա խոսում է փողի՝ կապիտալի փոխարկման մասին։

Պերպերյանը հարստության կուտակումը համարում է հասարակության բնականոն զարգացման կարևոր պայման։ Հարստությունն իր բնաձևով կուտակման համար պիտանի չէ. ապրանքները «մեծ մասամբ վաղանցուկ դյուրեղծանելի առարկաներ են։ Բայց հոն է դրամն աշխատության խնայյալ արդյունքն, զոհողությունն այդ ձևոյն տակ՝ զանմահություն կզգենու, մաս առ մաս կավելնա, կաճի, կբարդի»[27]։ Աշխատանքի արդյունքները փողի ձևով կուտակման ընթացքում դառնում են «մշտատև անկործան հարստություն, և այսպես ձեռք ձեռքի կուտան անցյալն ու ապագան... Դրամը կստեղծե դրամագլուխ, այսինքն մինն արտադրության եռյակ գործիներեն»[28]։ Խոսքը կապիտալի կուտակման մասին է, որը դառնում է «խնայյալ դիզյալ հարստություն, որ կծառայե արտադրելու մի այլ հարստություն»[29]։ Հեղինակի ընդգծած տողերը վկայում են, որ այդ դիզված հարստության միջոցով նոր հարստությունների ստեղծումը արտադրության մյուս տարրի՝ աշխատանքի շահագործման արդյունք է։ Այս իրողությունն առավել պատկերավոր է արտահայտված կապիտալի հետևյալ բնութագրության մեջ. «աշխատության քիրտն է այն, որ օր առ օր, շիթ առ շիթ հոսելով կփոխվի, կկնդանա ի մշտատև անկործան հարստություն»[30]։ Կապիտալի այս ճշմարտացի բնութագրությունից կարող է այն տպավորությունը ստացվել, որ Պերպերյանը գիտակ է աշխատանքի ու կապիտալի շահերի հակասությանը, համոզված է, որ բանվորների ու կապիտալիստների շահերն անհաշտելի են։ Ցավոք, այդ տպավորությունը խաբուսիկ է։ Այն իրողությունը, որ կապիտալը «թշնամի է աշխատության», «մի անգութ բռնավոր է», Պերպերյանը որակում է որպես ամբաստանություն և դրամագլուխը համարում է «փրկիչ մը, բարերար զորություն մը»[31]։

Հարստության բաշխումը, գրում է Պերպերյանը, կատարվում է ըստ արտադրության երեք հիմնական գործոնների, այն է՝ ըստ աշխատանքի, կապիտալի և հողի։ Սահմանազատելով եկամուտների երեք ձևերը, նա փորձում է պարզել դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը։ Աշխատավարձը համարելով որպես աշխատանքի և ծառայությունների վարձատրություն ընդհանրապես, հեղինակը այդ կատեգորիայի մեջ դասում է՝ բանվորի աշխատանքի վարձատրությունը (թոշակ), ձեռնարկատիրոջ գործունեության վարձը (նույնպես թոշակ) և պետության ծառայության վարձը (հարկ)։ Դրամագլխի եկամուտը կոչվում է վարձագին, երբ այն գործում է արտադրության միջոցների ձևով, իսկ կապիտալի փողային ձևի եկամուտը կոչվում է տոկոս. հողի դիմաց ստացված եկամուտը կոչվում է ռենտա։ Պերպերյանը առանձնացնում է նաև եկամուտի մի չորրորդ տեսակ՝ շահ, որը ստացվում է, «երբ դրամատեր գործարանատերն յուր արտադրությունն ծախելով՝ նոցա արժեքով կվճարե ամեն արդյունարար ծառայություն, որ գործակցած էր յուրյան, մնացածն կկոչվի նորա շահն»[32]։ Այս բնութագրման համաձայն շահույթը նոր ստեղծ-

---

26 Ռ. Պերպերյան, Դրամ, էջ 18։

27 Նույն տեղում, էջ 19։

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում, էջ 20։

30 Նույն տեղում, էջ 19։

31 Նույն տեղում, էջ 20։

32 Ռ. Պերպերյան, Համառոտ քաղաքական տնտեսություն, էջ 52։

ված արժեքի այն մասն է, որ մնում է ձեռնարկատիրոջը բոլոր տեսակի վճարումները կատարելուց հետո, այսինքն՝ հավելյալ արժեքը։

Պերպերյանը աշխատավարձը համարում է «աշխատության գինն...» և նշում, որ «պետք է զանազանել դրամական կամ երևութական թոշակ և իրական թոշակն»[33]։ Խոսքը վերաբերում է անվանական և իրական աշխատավարձին։ Աշխատողին հետաքրքրում է իրական աշխատավարձը միայն, որով նա ձեռք է բերում իր «կենաց պիտոյքն», որովհետև «թոշակն բարձր է ոչ այն ատեն, երբ գումարն անվանաբար բարձր է, այլ երբ ավելի օգտակարություն կարև գնել»[34]։ Աշխատավարձի մակարդակը անմիջականորեն կապված է կենսամիջոցների գների հետ, որոնք վերջին հաշվով կարգավորվում են ապրանքների արժեքի փոփոխություններով։ Ըստ նրա՝ «Իրերն ածան արտադրելով կարե միայն»[35] իրական աշխատավարձը բարձրանալ և ժողովրդի դրությունը բարելավվել։ Նրան լավ հայտնի է, որ աշխատավարձի հիմքում ընկած է աշխատանքի «արժեքը», ուստի և «այլ և այլ գործոց և գործողաց համեմատ թոշակներն կզանազանին»[36]։ Նրա կարծիքով այս տարբերությունները պայմանավորված են աշխատողների ֆիզիկական և մտավոր կարողություններով, նրանց գիտական ու կրթական մակարդակով։ Մյուս ապրանքների արժեքի նման, աշխատանքի «արժեքը» ևս կախված է նրա վերարտադրության համար պահանջվող ծախսերից, ինչպես նաև «մատուցման և խնդրանքի» հարաբերակցությունից։ Այս կապակցությամբ Պերպերյանը վկայակոչում է աշխատավարձի մակարդակը պայմանավորող մի քանի հանգամանքների վերաբերյալ Ադամ Սմիթի ասույթները։

Աշխատավարձի տեսության շարադրանքում առավել ուշագրավ են աշխատանք-ապրանքի գնման և վաճառման վերաբերյալ Պերպերյանի դատողությունները։ Բանվորը և ձեռնարկատերը արտաքուստ հանդես են գալիս որպես իրավահավասար ապրանքատերեր։ Բայց նա նկատում է, որ այդ հավասարությունը ձևական է միայն, որովհետև բանվորը հավասարության իր իրավունքը պաշտպանելու նյութական ուժ չունի։ Իսկ ձեռնարկատերերն, ընդհակառակը, հսկայական արտոնություններ տեր են և ամեն րոպե կարող են իրենց կամքը թելադրել բանվորին, որը ստիպված է ընդունել առաջարկված պայմանները, քանի որ «ինքն անմիջապես պետք ունի սնանելու և սնուցանելու իրեններն, չունելով այլ ինչ, քան զյուր աշխատություն»։ Եվ ահա այստեղ է, որ արդարությունը բռնաղաստվում է, և տնտեսական հարկադրանքի ներգործությամբ հավասարությունը փոխվում է իր հակադրության՝ դառնում է վարձու ստրկություն[37]։

Արտադրության մեջ այս անհավասարության արդյունքը լինում է այն, որ հասարակության մեջ հարստությունն ու աղքատությունը բևեռանում են, որը պատկերված է հեղինակի «Թշվառություն և գութ» բանախոսության մեջ։ Հարուստների ցոփ ու շվայտ կյանքի մի պալատական խնջույքի նկարագրությունից հետո Պերպերյանը եզրակացնում է. «Թշվառությունն էր այն լիության և երանության դրանն առջև սովամահ և ցրտասառույց—Թշվառություն՝ հակակողմն միտալին, մարդկային ընկերության մի ուրիշ երեսն, գիշերն օրվան, ողբերգությունն կատակերգության քով, անդունդն մթին ծաղկազարդ գետնին տակ, դրախտին տակ դժոխքն»[38]։ Սակայն այս գողտրիկ բանախոսության մեջ այսպիսի վարպետությամբ բացահայտված ժամանակակից կյանքի սոցիալական հակասության վերացման ուղին մեր բուրժուական բարոյախոսը համարում է շահագործողների գթասրտությունը, որի օգնությամբ և պետք է

33 Նույն տեղում, էջ 54։

34 Նույն տեղում։

35 Նույն տեղում, էջ 55։

36 Նույն տեղում։

37 Նույն տեղում, էջ 57—58։

38 Ռ. Պերպերյան, Երկու բանախոսություն, Կ. Պոլիս, 1880, էջ 11։

այդ դրախտի ու դժոխքի հակադրություն ներկայացնող իրականությունը վերափոխվի ազատության, հավասարության և եղբայրության թագավորության[39]։

Բայց հետագայում, «Քաղաքատնտեսության» ձեռնարկում, ավելի մոտիկից քննելով բանվորների և ձեռնարկատերերի տնտեսական հարաբերությունները, հեղինակը չի ժխտում ձեռնարկատերերի դեմ բանվորների պայքարի անհրաժեշտությունը։ Նրան հայտնի է նաև, որ բանվորները միայնակ անկարող են պաշտպանել իրենց իրավունքները։ Դրա համար նրանք պետք է համախմբվեն արհեստակցական միություններում, ստեղծեն փոխօգնության գրամարկղեր, միջոցառումներ մշակեն, հարկ եղած դեպքում գործադուլներ կազմակերպելու, գործադուլավորներին օգնելու և այլևայլ միջոցներով աշխատավորների շահերը պաշտպանելու համար։ Այս բնագավառում լուրջ նվաճումներ ունեն անգլիական բանվորները, որոնց արհեստակցական միությունների շնորհիվ է, որ «գործավորաց վիճակն լավագույն է այսօր յԱնգլիա, քան առաջ քան զհաստատություն սույն ընկերությանց»[40]։ Բնորոշ է, որ բանվորների ու ձեռնարկատերերի շահերի հակադրության բնութագրության ընթացքում հեղինակը բանվորների շահերն է պաշտպանում և դատապարտում է արհմիութենական կազմակերպությունների հակառակորդներին։ Այդ կազմակերպությունների հիմնական խնդիրն է վերացնել տնտեսական օրենքների «արդար գործադրության արգելքները»[41] և ոչ թե պայքարել այդ օրենքների դեմ, ուստի և դրանց գործադրությունն արդար է ու օրինական։ Այնինքն, հեղինակը հանդես է գալիս կապիտալիստական կարգերի օրինականության պահպանման դիրքերից։ Նա այդ նույն ոգով էլ լուսաբանում է աշխատավարձի ձևերի կարևորությունը։ Աշխատանքի ու կապիտալի հարաբերությունների բարվոքումը նա համարում է աշխատավարձի ձևերի կատարելագործման կարևորագույն խնդիրը։ Պերպերյանը մերժում է աշխատավարձի ժամանակավարձային ձևը, այն համարելով վիրավորական բանվորի համար, երբ նա աշխատում է «գործատիրոջ նվաստացուցիչ հսկողության» տակ։ Այդ «հին գերության ածանցյալ ստրկական ձևին» նա հակադրում է աշխատավարձի նորագույն ձևերը, որոնք «զաշխատություն և դրամագլուխ հաշտեցնելու»[42] կարևոր լծակներ են։ Դրանցից մեկը գործավարձային ձևն է կամ ինչպես նա է ասում, «սակով աշխատությունը», որը խթանում է անձնական շահագրգռվածությունը և շահավետ է երկուստեք. գործավարձը 75%-ով բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և 50%-ով՝ աշխատավարձը։

Շահերի ներդաշնակության կատարելագործման հաջորդ եղանակը շահույթից բաժին ստանալու սիստեմն է, երբ, ինչպես Պերպերյանն է հավատացնում, «առանց թոշակեն որևէ մաս մի վար դնելու՝ տարեդխուն գոյացած զուտ շահն, ամեն ծախք հանելով, երկու մասի կբաժնեն, մին դրամատիրոջ կլինի և մյուսն կբաժնվի այլ և այլ թոշակավոր աշխատավորաց մեջ ըստ աստիճանի թոշակաց»[43]։ Հաճախ շահույթից կատարված այս մասհանումները մնում են «գանձուն մեջ», և այդ ուղիով բանվորները դառնում են դրամատերեր, որը և նրանց հնարավորություն է տալիս ստեղծել առևտրական և արտադրական կոոպերատիվ ձեռնարկություններ։ Այդ կարգի ընկերություններից Պերպերյանը հիշատակում է Ռոշտեյլի 24 կոոպերատորների ընկերությունը, որի անդամների թիվը երեք տասնամյակի ընթացքում հասնում է 1200 մարդու։ Արտադրական կոոպերատիվ կազմակերպություններից «բազումք հաստատվեցան վերջին քսան տարվոյն մեջ»[44], որոնք, սակայն, քայքայվում

39 Նույն տեղում, էջ 29։
40 Ռ. Պերպերյան, Համառոտ քաղաքական տնտեսություն, էջ 59։
41 Նույն տեղում, էջ 60։
42 Նույն տեղում, էջ 61։
43 Նույն տեղում։
44 Նույն տեղում։

են տնօրենների անշնորհքության հետևանքով։ Այլ կերպ ասած, Պերպերյանը հանդես է գալիս որպես կոոպերատիվ սոցիալիզմի կողմնակից։

Բաշխման հարաբերությունների հետ անմիջականորեն առնչվում են ազգաբնակչության շարժման օրինաչափությունները, որոնց տնտեսական բովանդակությունը հանգամանորեն լուսաբանում է Պերպերյանը։ Սկզբից ևեթ նա մերժում է Մալթուսի ուսմունքը այն հիմնավոր պատճառաբանությամբ, որ իրականում կենսամիջոցների արտադրության զարգացման տեմպերը գերազանցում են բնակչության աճին։ Նա այս դրույթը հիմնավորում է ԱՄՆ-ի և եվրոպական երկրների XIX դ. առաջին կեսի ժամանակաշրջանի վերաբերյալ համապատասխան վիճակագրական տվյալներով, որոնք հերքում են այն, «ինչ Մալթուսը օրենք կանվանի»[46]։ Բացի այդ, Մալթուսի ազգաբնակչության տեսությունը սնանկ է նաև իր սոցիալական ու տրամաբանական բովանդակությամբ։ Ժամանակակից քաղաքակիրթ երկրներին բնորոշ է «ժողովրդյան մեծագույն մասին» աղքատությունը, գործազրկությունը և այլ ու այլ կարգի թշվառություններ. Մալթուսն արդյոք «իրավունք ունեցած է եզրակացնել թե միմիայն բազմամարդությունն է պատճառ չարյաց։ Հողի օրենքներ, անարդար վարչություն, անիրավ բաշխում, այլ և այլ արգելումներ աշխատության և շրջաբերության... այսպիսիք միթե մեծ բաժին չունին ժողովուրդյան թշվառության մեջ»[46]։ Ասված է միանգամայն որոշակի. աշխատավորների թշվառության բուն պատճառը գոյություն ունեցող հասարակարգի հողի բարքերն են, անարդար բաշխումը և այլ կարգի սոցիալական անարդարությունները։ Այնուհետև, բընակչության արագ բազմացումը ինքնին Պերպերյանը համարում է ոչ թե չարիք, այլ բարիք. «բուն խնդրոյն վրայ խոսելով էապես չարի՞ք է բազմամարդությունն. աշխատասեր, արհեստագետ խելացի ժողովուրդ մի կարող է երջանիկ ապրել, նույնիսկ երբ յուր երկրին ընդարձակությունն աննշան լինի»[47]։ Հեղինակի այս դատողությունները ելնում են արժեքի աշխատանքային տեսության սկզբունքներից։ Աշխատանքն է հարստության աղբյուրը, որի ծավալը կախված է ազգի տրամադրության տակ եղած աշխատաֆոնդից։ Ադամ Սմիթի այս դրույթին են արձագանքում Պերպերյանի հետևյալ տողերը. «խիտ ժողովուրդ մի խթան է աշխատության. այդպիսի ժողովրդյան մեջ կենաց կռիվն ավելի կրակոտ է և հետևապես ավելի արդասավոր, ավելի հնարիչ»[48]։

Մալթուսի ուսմունքի քննադատությունը, սակայն, սրանով դեռ չի սպառվում։ Այդ տեսությունը ինքնին ենթադրում է, որ մարդկությունը հասել է արդեն բնության հնարավորությունների օգտագործման սահմանագծին, որ գիտությունն արդեն սպառել է իր զարգացման բոլոր կարողությունները։ Իրականում, սակայն, բնության գանձերը գործնականորեն անսպառ են, իսկ գիտության ու տեխնիկայի ծաղկման հեռանկարները՝ ծիածանագույն։ Մալթուսականության դեմ ուղղված այս հիմնավոր պատճառաբանությունների հիման վրա հեղինակը տալիս է այդ հետադիմական տեսության հետևյալ ճշմարիտ բնութագրությունը. «Մալթուսի վարդապետությունն այսպես ահա մի հուսահատեցուցիչ վարդապետություն է, որով զկյանս իսկ կդնե կենաց չարիքներուն պարտական, և կառաջարկե ջնջել կյանքն, երջանկացնելու համար զկյանս»[49]։ Հեղինակի բնութագրության մեր կողմից ընդգծված տողերը հատկապես բազմանշանակ են այն տեսակետից, որ Մալթուսը փաստորեն առաջարկում է աշխատավորների «կյանքը ջնջել՝ հանուն ունևորների կյանքի բարգավաճման։

Այսպիսով, Ռ. Պերպերյանն իր վերլուծություններում, ճշտորեն տալով կապիտալիստական հարաբերությունների պատկերը, այնուամենայնիվ դուրս չեկավ բուրժուական տնտեսագիտության շրջանակներից և հանդես եկավ որպես բանվորական շարժման աջ թևի ներկայացուցիչ։

---

45 Նույն տեղում, էջ 77։

46 Նույն տեղում, էջ 79—80։

47 Նույն տեղում, էջ 80։

48 Նույն տեղում։

49 Նույն տեղում։

ОСВЕЩЕНИЕ ТЕОРИИ ТРУДОВОЙ СТОИМОСТИ В ТРУДАХ РЕТЕОСА ПЕРПЕРЯНА

НЕРСЕС ТОВМАСЯН

Резюме

Видный западноармянский публицист-экономист Ретеос Перперян опубликовал в Константинополе две политэкономические работы— «Краткую политическую экономию» (1883) и «Деньги» (1886). Центральное место в работах занимает проблема богатства, которую автор освещает, исходя из принципов теории трудовой стоимости. Рассматривая процесс производства материальных ценностей, Перперян подчеркивает первенствующее значение основного элемента производства—человека, продукт труда которого является источником доходов всех слоев буржуазного общества.

Обсуждая вопросы распределения богатства, Перперян отмечает существующую несправедливость, следствием которой является поляризация богатства и бедности, и признает необходимость борьбы рабочих против предпринимателей. Однако эта борьба имеет чисто экономический характер, иначе говоря, автор выступает в роли представителя правого крыла рабочего движения.